

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԱԼԱ ԱՐՇԱՎԻՐԻ

**ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՎԱԾ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա,
քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2019

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ГРИГОРЯН ЛАЛА АРШАВИРОВНА

**ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ УГОЛОВНОЙ
ОТВЕТСТВЕННОСТИ ЗА ПОСРЕДСТВЕННОЕ ИСПОЛНЕНИЕ
ПРЕСТУПЛЕНИЯ**

АВТОРЕФЕРАТ

**диссертации на соискание ученой степени кандидата юридических
наук по специальности 12.00.05 – “Уголовное право и криминология;
уголовно-исполнительное право”**

ЕРЕВАН – 2019

**Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում**

Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Ա. Հ. Գաբուլյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտությունների
դոկտոր, դոցենտ **Ա. Ռ. Մարգարյան**
իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Ա. Հ. Օսիկյան**

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թվականի
փետրվարի 12-ին, ժամը 14³⁰-ին ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական
համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական
խորհրդի նիստում (Երևան – 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական
համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2019 թվականի դեկտեմբերի 13-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական

քարտուղար՝ իրավ. գիտ. թեկ., դոցենտ

S. Հ. Սուլյան

Тема диссертации утверждена в

Ереванском государственном университете

Научный руководитель:

доктор юридических наук,
профессор **А. А. Габузян**

Официальные оппоненты:

доктор юридических наук,
доцент **А. Р. Маргарян**

кандидат юридических
наук, доцент **А. А. Осикян**

Ведущая организация:

Российско-армянский университет

Защита диссертации состоится 12-ого февраля 2020 г. в 14³⁰ часов на
заседании Специализированного совета ВАК РА 001 по юриспруденции
при Ереванском государственном университете (Ереван – 0025, Алека
Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных
работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 13-ого декабря 2019 г.

Ученый секретарь специализированного

совета: кандидат юрид. наук, доцент

T. O. Суджян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Մասնագիտական գրականության մեջ հանցագործության միջնորդավորված կատարման ավանդաբար քննարկվում է հանցակցության ինստիտուտի շրջանակներում: Հիմնախնդրի հետազոտության շրջանակների նման սահմանափակումը թույլ չի տալիս բացահայտելու հանցագործության միջնորդավորված կատարման իրական տեղն ու նշանակությունը քրեաիրավական ինստիտուտների համակարգում:

Հանցագործության միջնորդավորված կատարմանն առնչվող հարցերը վերաբերում են ոչ միայն հանցակցությանը, այլև քրեական իրավունքի այլ ոլորտներին, ինչպիսիք են հանցագործության օբյեկտիվ կողմը, սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը, արարքի հանցավորությունը բացառող հանգամանքները: Այդ պատճառով ՀՀ քրեական օրենսգրքում (այսուհետ՝ քր.օր.) հանցագործության միջնորդավորված կատարման վերաբերյալ նորմերը համակարգված չեն, հանդես են գալիս որպես քր.օր.-ի ընդհանուր մասի տարբեր ինստիտուտների բաղկացուցիչ տարրեր: Դա նշանակում է, որ այդ նորմերը չեն կարող կիրառվել այլ կերպ, քան համալիր ձևով, ուստի հանցագործության միջնորդավորված կատարմանն առնչվող հիմնահարցերը նույնպես չեն կարող հետազոտվել մեկուսի:

Հանցագործության միջնորդավորված կատարման վերաբերյալ գոյություն ունեցող օրենսդրական կարգավորումը լուծում չի տալիս հիմնախնդրին վերաբերող բոլոր վիճահարույց հարցերին: Մասնավորապես՝ օրենսդրորեն ամրագրված չէ հանցակցության ինստիտուտից առանձին հանցանքի միջնորդավորված կատարման հնարավորությունը, որակման ընթացքում դժվարություններ կարող են առաջացնել հանցագործության միջնորդավորված կատարման դեպքում փաստական սխալին, սահմանազանցմանը, չավարտված միջնորդավորված կատարմանը վերաբերող հարցերը: Քննարկման կարիք ունեն նաև միջնորդավորված դրդչությանը, օժանդակությանը և կազմակերպմանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հանցագործության միջնորդավորված կատարմանն առնչվող որակման այլ հարցեր:

Հանցանքի միջնորդավորված կատարմանն առնչվող հարցերի վերաբերյալ նոր մոտեցումներ են ամրագրվել ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ): Այդ առումով էապես կարևորվում է նաև Նախագծում առկա նոր իրավակարգավորումները քննարկման առարկա դարձնելը և գործող օրենսդրության հետ համեմատական վերլուծություն կատարելը:

Դատաքննչական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ

թեև հանցանքի միջնորդավորված կատարման դեպքեր հաճախ չեն հանդիպում, սակայն առկա դեպքերն առաջացնում են որակման բարդություններ: Մեր համոզմամբ՝ հանցագործության միջնորդավորված կատարման դեպքերի հարաբերականորեն քիչ տարածվածությունը չի կարող նվազեցնել հիմնախնդրի հետազոտության կարևորությունը: Հենց հարցի վերաբերյալ սակավ դատաքննչական պրակտիկան կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, որ հանցանքի միջնորդավորված կատարման հնարավոր վիճահարույց հարցերը մնան չբացահայտված:

Հայրենական քրեական իրավունքում հանցագործության միջնորդավորված կատարման տեսական և գործնական հիմնախնդիրների խորությամբ հետազոտված չլինելը, մասնագիտական գրականության մեջ հանցագործության միջնորդավորված կատարման օրենսդրական կարգավորմանը և որակմանը վերաբերող տարաբնույթ հարցերի շուրջ առկա ոչ միատեսակ մոտեցումները վկայում են ինչպես հետազոտության թեմայի բազմակողմանիության և բարդության, այնպես էլ արդիականության մասին:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը հանցագործության միջնորդավորված կատարման օրենսդրական կարգավորման և որակման ընթացքում ծագող հասարակական հարաբերություններն են: Հետազոտության առարկան հանցագործության միջնորդավորված կատարման կարգավորմանն ուղղված իրավական նորմերն են, Նախագծի դրույթները և դատական պրակտիկան:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը հանցագործության միջնորդավորված կատարման տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր հետազոտությունն է, և դրա հիման վրա օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումը:

Այդ նպատակին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել հանցագործության կատարողի օրենսդրական բնորոշման պատմական զարգացումը,
- սահմանել հանցանքի միջնորդավորված կատարման հասկացությունը, վերլուծել դրա հատկանիշները,
- պարզել հանցագործության միջնորդավորված կատարման և հանցագործության մասնակիցների բազմաթվության այլ ձևերի հարաբերակցությունը,
- համեմատախրավական վերլուծության ենթարկել հանցագործության միջնորդավորված կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապե-

տության և արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության նորմերը,

- առանձնացնել հանցագործության միջնորդավորված կատարման դրսևորումները, վերհանել դրանց առանձնահատկությունները,

- մշակել հանցանքի միջնորդավորված կատարման որակման կանոնները,

- կատարված հետազոտության արդյունքների հիման վրա մշակել և ներկայացնել համապատասխան օրենսդրական առաջարկություններ:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Հանցագործության միջնորդավորված կատարման տեսական և գործնական հիմնախնդիրները հայրենական քրեական իրավունքում մենագրության կամ ատենախոսության մակարդակով չեն հետազոտվել:

Խորհրդային ժամանակաշրջանի և ռուսական ժամանակակից մասնագիտական գրականության մեջ հանցագործության միջնորդավորված կատարմանն առնչվող հիմնախնդիրները հետազոտության առարկա են դարձել Մ.Ի. Կովալյովի, Ն.Վ. Բարանկովի, Դ.Ա. Լունկովի, Ն.Ի. Սալնիկովայի, Օ.Լ. Յվիրենկոյի, Վ.Գ. Ուսովի գիտական աշխատություններում: Հանցակցության ինստիտուտի շրջանակներում հանցագործության միջնորդավորված կատարմանը վերաբերող առանձին հարցեր քննարկման առարկա են դարձել Ս.Ս. Ավետիսյանի, Ա.Ա. Արոսյունովի, Դ.Ա. Բեգբորոդովի, Ռ.Ռ. Գալիակբարովի, Ա.Պ. Կոզլովի, Պ.Ֆ. Տելնովի, Ռ.Ի. Միխենի, Գ.Վ. Նազարենկոյի և այլ գիտնականների աշխատություններում:

Այդ աշխատությունների շրջանակներում կատարված հետազոտություններն անխոս կարևոր նշանակություն ունեն հանցագործության միջնորդավորված կատարման հիմնախնդիրների վերհանման և լուծման գործում: Չնայած վերոնշյալին՝ հանցանքի միջնորդավորված կատարման հետ կապված մի շարք հիմնախնդիրներ միանշանակ լուծում չեն ստացել, մնում են խիստ արդիական և հետագա գիտական հետազոտության կարիք են զգում:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Հետազոտության իրավական հիմքն են կազմել ՀՀ քրեական օրենսգիրքը, «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքները, Ռուսաստանի, Ուզբեկստանի, Տաջիկստանի, Ղազախստանի, Ուկրաինայի, Լատվիայի, Լիտվայի, Մոլդովայի, Լեհաստանի, Շվեյցարիայի, Բելգիայի, Դանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ Տեխաս և Կալիֆոռնիա նահանգների, Հոլանդիայի, Թուրքիայի,

Սան-Մարինոյի, Նորվեգիայի քրեական օրենսգրքերը: Հետազոտության փորձառական հիմքն են կազմել հանցակցության ինստիտուտին առնչվող ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները, ինչպես նաև հանցանքի միջնորդավորված կատարմանն առնչվող ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների դատավճիհները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության ընթացքում կիրառվել են անալիզի և սինթեզի, պատմաիրավական, համեմատաիրավական, համակարգակառուցվածքային մեթոդները, ինչպես նաև կատարվել է դատական ակտերի ուսումնասիրություն:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ հայրենական քրեական իրավունքում առաջին անգամ փորձ է արվել իրականացնելու հանցագործության միջնորդավորված կատարման տեսական և գործնական հիմնախնդիրների բազմակողմանի և համընդգրկուն վերլուծություն: Հետազոտության արդյունքներով կատարվել են տեսական եզրահանգումներ և ներկայացվել են օրենսդրական առաջարկներ:

Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է նաև պաշտպանության ներկայացվող դրույթներում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները.

1. Հանցագործության միջնորդավորված կատարման մասին դրույթն ամրագրված է կատարողի սահմանման մեջ (քր.օր.-ի հոդված 38-ի երկրորդ մաս), ինչից հետևում է, որ հանցագործության միջնորդավորված կատարումը հնարավոր է միայն կատարողի կողմից և կարող է դրսևորվել միայն հանցակցության կազմում: Մինչդեռ գործնականում հանցանքը միջնորդավորված ձևով կարող է իրականացնել նաև կազմակերպիչը, դրդիչը, օժանդակողը, ինչպես նաև առանձին հանցանք կատարող անձը: Սակայն այդ անձանց կողմից հանցագործության միջնորդավորված կատարման վերաբերյալ նորմը քր.օր.-ում բացակայում է: Այդ օրենսդրական բացը լրացնելու համար առաջարկվում է հանցագործության միջնորդավորված կատարման մասին դրույթը դուրս բերել կատարողի սահմանումից և հանցագործության միջնորդավորված կատարման վերաբերյալ ինքնուրույն հոդված նախատեսել հանցակցության ինստիտուտից առանձին:

2. Առաջարկվում է հանցագործության միջնորդավորված կատարման վերաբերյալ հոդվածում ամրագրել հետևյալ սահմանումը՝ հանցագործության միջնորդավորված կատարում է համարվում հանցագործության սուբյեկտի կողմից դիտավորյալ հանցանքի կատարումն առանց տվյալ հանցանքին անմիջականորեն մասնակցելու, այլ այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական

պատասխանատվության կամ հանցանքը կատարել են անզգուշությամբ: Այդ հողվածում առաջարկվում է ամրագրել նաև, որ հանցագործության միջնորդավորված կատարում կարող են իրականացնել ինչպես հանցակիցները, այնպես էլ՝ առանձին հանցանք կատարող անձը:

3. Ներկայումս օրենսդրորեն կարգավորված չէ նաև հանցագործության միջնորդավորված կատարումից կամովին հրաժարվելու հարցը: Հանցագործությունից կամովին հրաժարման ինստիտուտի նպատակը հանցագործությունների կանխարգելումն է, ուստի հանցագործության միջնորդավորված կատարումից կամովին հրաժարման համար պետք է սահմանել այնպիսի պայմաններ, որոնց պահպանումը կապահովի այդ նպատակի իրականացումը: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է քր.օր.-ում սահմանել, որ հանցանքի միջնորդավորված կատարողը կամովին հրաժարվելու դեպքում ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նա, պետական մարմիններին հաղորդելով կամ ձեռնարկված այլ միջոցներով, կանխել է իր կողմից օգտագործվող անձի կողմից տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմն ավարտին հասցնելը: Եթե նշված գործողությունները չեն հանգեցրել տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմի ամբողջական իրականացումը կանխելուն, ապա ձեռնարկված միջոցները հաշվի են առնվում որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:

4. Գործնականում հնարավոր են հանցագործության միջնորդավորված կատարման այնպիսի իրավիճակներ, երբ առկա են երկու կամ ավելի միջնորդավորված կատարողներ կամ միջնորդավորված կատարողի կողմից օգտագործվող երկու կամ ավելի անձինք: Նման իրավիճակներին քրեաիրավական գնահատական տալու համար առաջարկվում է ղեկավարվել հետևյալ կանոններով: Եթե հանցագործության սուբյեկտի հատկանիշներով օժտված երկու կամ ավելի անձինք հանցանքը կատարել են այնպիսի անձի համատեղ օգտագործելով, որը օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել է անզգուշությամբ, ապա առկա է համակատարում: Իսկ եթե հանցագործության սուբյեկտի հատկանիշներով օժտված անձը հանցանքը կատարել է երկու կամ ավելի այնպիսի անձանց օգտագործելով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն պատասխանատվության կամ հանցանքը կատարել են անզգուշությամբ, ապա համակատարումը բացակայում է, և առկա է հանցագործության միանձնյա միջնորդավորված կատարում:

5. Գործնականում կարող են որակման բարդություններ առաջանալ հանցագործության միջնորդավորված կատարման այն դեպքերում, երբ միջնորդավորված կատարողի կողմից օգտագործվող անձը չի սկսել կամ ավարտին չի հասցրել միջնորդավորված կատարողի դիտավորության մեջ

ընդգրկված արարքը: Նման դեպքերում միջնորդավորված կատարողի արարքն առաջարկվում է որակել հետևյալ կանոններով՝

1) Եթե միջնորդավորված կատարողը ցանկացել է հանցանքը կատարել այլ անձի օգտագործելու միջոցով, սակայն այդ անձը չի համաձայնվել կատարելու միջնորդավորված կատարողի դիտավորության մեջ ընդգրկված արարքը, ապա միջնորդավորված կատարողը պատասխանատվություն է կրում համապատասխան հանցագործության նախապատրաստության համար:

2) Եթե միջնորդավորված կատարողի կողմից օգտագործվող անձը սկսել, բայց ավարտին չի հասցրել միջնորդավորված կատարողի դիտավորության մեջ ընդգրկված արարքը, ապա միջնորդավորված կատարողը պատասխանատվություն է կրում համապատասխան հանցագործության նախապատրաստության կամ հանցափորձի համար՝ կախված նրանից, թե որ փուլում է խափանվել նրա կողմից օգտագործված անձի արարքը:

6. Գործնականում կարող են որակման բարդություններ առաջանալ նաև հանցագործության միջնորդավորված կատարման սահմանազանցման դեպքերում: Հանցագործության միջնորդավորված կատարման սահմանազանցում է համարվում միջնորդավորված կատարողի օգտագործած անձի կողմից այնպիսի վնաս պատճառելը, որը չէր ցանկանում միջնորդավորված կատարողը: Հանցագործության միջնորդավորված կատարման սահմանազանցման դեպքում միջնորդավորված կատարողի արարքն առաջարկվում է որակել հետևյալ կանոններով՝

1) Եթե սահմանազանցման արդյունքում իրականացվել է միջնորդավորված կատարողի նպատակը, և նա նախատեսել է սահմանազանցման իրական հնարավորությունն ու գիտակցաբար թույլ է տվել այն, ապա նա պատասխանատվություն է կրում սահմանազանցման համար:

2) Եթե սահմանազանցման արդյունքում իրականացվել է միջնորդավորված կատարողի նպատակը, և նա չի նախատեսել սահմանազանցման իրական հնարավորությունը, ապա նա պատասխանատվություն է կրում իր դիտավորությամբ ընդգրկված վնասը պատճառելու համար:

3) Եթե սահմանազանցման արդյունքում չի իրականացվել միջնորդավորված կատարողի նպատակը, և նա նախատեսել է սահմանազանցման իրական հնարավորությունն ու գիտակցաբար թույլ է տվել այն, ապա նա պատասխանատվություն է կրում իր դիտավորությամբ ընդգրկված հանցագործության նախապատրաստության, ինչպես նաև սահմանազանցման համար:

4) Եթե սահմանազանցման արդյունքում չի իրականացվել միջնորդավորված կատարողի նպատակը, և նա չի նախատեսել սահմանազանցման իրական հնարավորությունը, ապա նա պատասխանատվություն է կրում իր

դիտավորությամբ ընդգրկված հանցագործության նախապատրաստության համար:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ այն հայրենական քրեական իրավունքում հանցանքի միջնորդավորված կատարման հիմնախնդիրների վերաբերյալ կատարված առաջին համալիր հետազոտությունն է, որի արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական ուսումնասիրություններում: Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ դրա արդյունքները կարող են օգտագործվել քրեական օրենսդրության կատարելագործմանն ուղղված օրինաստեղծ գործունեության ընթացքում, իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև ուսումնական գործընթացում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը:

Ատենախոսության հիմնական դրույթները և եզրահանգումները քննարկվել են Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնում, ինչպես նաև տեղ են գտել հեղինակի կողմից ատենախոսության թեմայով հրապարակված և դրա բովանդակությունն արտացոլող գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են ութ պարագրաֆ, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի ու գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում ներկայացվել են հետազոտության թեմայի արդիականությունը, մշակվածության աստիճանը, օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, հետազոտության մեթոդաբանական, տեսական, իրավական և փորձառական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

«Հանցագործության միջնորդավորված կատարման ընդհանուր բնութագիրը» վերտառությունը կրող **1-ին գլուխը** բաղկացած է երեք պարագրաֆից:

«Հանցագործության կատարողի օրենսդրական բնորոշման պատմական զարգացումն ու կատարելագործման հեռանկարները» վերտառությամբ 1.1 պարագրաֆում ուսումնասիրվել է Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի Դատաստանագրքերում, 1922, 1927 և 1942 թվականների ՀԽՍՀ քրեական օրենսգրքերում, ինչպես նաև գործող քրեական օրենսգրքում հանցակցության և մասնավորապես, հանցագործության կատարողի վերաբերյալ նորմերի մշակման և պատմական զարգացման

գործընթացը: Անդրադարձ է կատարվել Նախագծում տեղ գտած՝ հանցանքի միջնորդավորված կատարման վերաբերյալ կարգավորումներին:

«Հանցագործության միջնորդավորված կատարման հասկացությունը, հատկանիշները և հարաբերակցությունը հանցագործության մասնակիցների բազմաթվության այլ ձևերի հետ» վերտառությամբ 1.2 պարագրաֆում հեղինակը բացահայտել է հանցագործության միջնորդավորված կատարման էությունը, մատնանշել դրա հանրային վտանգավորությունը պայմանավորող գործոնները: Մասնավորապես, ըստ հեղինակի, հանցագործության միջնորդավորված կատարման էությունը կայանում է նրանում, որ միջնորդավորված կատարողը, անտարբեր լինելով իր կողմից օգտագործվող անձի շահերի հանդեպ, դրանցից վեր է դասում իր նեղ անձնական ապօրինի շահերն ու մարդուն որպես հանցագործության «գործիք» օգտագործելով՝ մնում է հանցավոր իրադրժության ստվերում: Այնուհետև հեղինակն առանձացրել է հանցագործության միջնորդավորված կատարման էական հատկանիշները, որոնցով այն տարբերվում է հանցագործության մասնակիցների բազմաթվության այլ տեսակներից՝ հանցակցությունից, անզգույշ համապատճառումից և հանցանքն այնպիսի անձանց հետ համատեղ կատարելուց, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության: Կատարված հետազոտության արդյունքներով առաջարկվել է հանցագործության միջնորդավորված կատարման հեղինակային բնորոշումը:

«Հանցագործության միջնորդավորված կատարման իրավական կարգավորումն արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ» վերտառությամբ 1.3 պարագրաֆում հեղինակը համեմատաիրավական հետազոտության է ենթարկել Ռուսաստանի, Ուզբեկստանի, Տաջիկստանի, Ղազախստանի, Ուկրաինայի, Լատվիայի, Լիտվայի, Մոլդովայի, Լեհաստանի, Շվեյցարիայի, Բելգիայի, Դանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ Տեխաս և Կալիֆոռնիա նահանգների, Հոլանդիայի, Թուրքիայի, Սան-Մարինոյի, Նորվեգիայի քրեական օրենսգրքերում առկա՝ հանցագործության միջնորդավորված կատարման վերաբերյալ նորմերը: Կատարված հետազոտության արդյունքում հեղինակն առանձանցրել է արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ հանցագործության միջնորդավորված կատարման իրավական կարգավորման հիմնական տարբերակները և մատնանշել է հայրենական քրեական օրենսդրության համար առավել նախապատվելի տարբերակը:

«Հանցագործության միջնորդավորված կատարման դրսևորումները» վերտառությունը կրող 2-րդ գլուխը բաղկացած է երեք պարագրաֆից:

«Քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի չհասած կամ անմեղսունակության վիճակում գտնվող անձի օգտագործումը» վերնագրով 2.1 պարագրաֆում հեղինակը վերհանել է հանցանքի միջնորդավորված կատարման տվյալ տեսակի սուբյեկտիվ կողմի առանձնահատկությունները, քննարկման առարկա է դարձրել օրենքով նախատեսված որոշակի տարիքի հասած, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջ չափով գիտակցելու կամ ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի օգտագործմամբ հանցանքի միջնորդավորված կատարման և այլ հարցեր:

«Ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ գործող անձի կամ հրաման կամ կարգադրություն կատարող անձի օգտագործումը» վերտառությամբ 2.2 պարագրաֆի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքներով հեղինակն առանձնացրել է այն կոնկրետ պայմանները, որոնց միաժամանակյա հավաստման դեպքում հնարավոր է փաստել հանցանքի միջնորդավորված կատարման քննարկվող տեսակների առկայությունը:

«Առանց մեղքի կամ անզգուշությամբ վնաս պատճառող անձի օգտագործումը» վերտառությամբ 2.3 պարագրաֆում հեղինակը տեսական գրականության և հայրենական դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքներով առանձնացրել է այն կոնկրետ պայմանները, որոնց միաժամանակյա հավաստման դեպքում հնարավոր է փաստել հանցանքի միջնորդավորված կատարման քննարկվող տեսակների առկայությունը:

«Հանցագործության միջնորդավորված կատարման որակման հիմնահարցերը» վերտառությունը կրող **3-րդ գլուխը** բաղկացած է երկու պարագրաֆից:

«Հանցագործության միջնորդավորված կատարման որակման հարցերը փաստական սխալի դեպքում» վերտառությամբ 3.1 պարագրաֆում հեղինակը, քննարկելով հանցագործության միջնորդավորված կատարման դեպքում փաստական սխալի հնարավոր դրսևորումներն ու դրանց քրեաիրավական նշանակությունը, մշակել և ներկայացրել է այն կանոնները, որոնցով անհրաժեշտ է առաջնորդվել հանցանքի միջնորդավորված կատարմանն առնչվող փաստական սխալին քրեաիրավական գնահատական տալիս:

«Չավարտված միջնորդավորված կատարման և միջնորդավորված կատարման սահմանազանցման որակման առանձնահատկությունները» վերտառությամբ 3.2 պարագրաֆում հեղինակն ուսումնասիրել է

այն հարցերը, որոնք կարող են ծագել չավարտված միջնորդավորված կատարման և միջնորդավորված կատարման սահմանազանցման որակման ընթացքում: Մոդելավորելով չավարտված միջնորդավորված կատարման և միջնորդավորված կատարման սահմանազանցման հնարավոր իրավիճակները՝ հեղինակը մշակել և ներկայացրել է որակման այն կանոնները, որոնցով անհրաժեշտ է առաջնորդվել չավարտված միջնորդավորված կատարման և միջնորդավորված կատարման սահմանազանցման կոնկրետ իրավիճակներում:

Եզրակացությունում, ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթների, ներկայացվել են հետևյալ եզրահանգումներն ու առաջարկությունները.

1.«Հանցագործության միջնորդավորված կատարում» հասկացության ծավալը սահմանելիս որպես ելակետ պետք է ընդունել ոչ թե «հանցագործության կատարող» եզրույթը, ինչպես դա արված է քր.օր.-ի հոդված 38-ի երկրորդ մասում, այլ «հանցագործության կատարում» եզրույթը: Այն չի նույնանում «հանցագործության կատարողի արարք» հասկացության հետ և իր ծավալով ավելի լայն է: Բացի հանցագործության կատարողի արարքից (հանցագործության օբյեկտիվ կողմի ամբողջությամբ կամ մասամբ իրականացում), «հանցագործության կատարում» հասկացությունն իր մեջ ներառում է նաև կազմակերպչի, դրդչի և օժանդակողի արարքները, ինչպես նաև հանցակցությունից դուրս հանցանքի կատարումը:

2. Ներկա օրենսդրական կարգավորման պայմաններում հանցագործության մասնակիցների բազմաթվության միակ ձև է համարվում հանցակցությունը: Սակայն գործնականում հնարավոր են հանցագործության մասնակիցների բազմաթվության այնպիսի ձևեր, որոնք հանցակցություն չեն համարվում և ունեն ինքնուրույն քրեաիրավական նշանակություն: Դրանք են՝ հանցագործության միջնորդավորված կատարումը, հանցանքն այնպիսի անձանց հետ համատեղ կատարելը, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության և անզգույշ համապատճառումը: Հանցագործության մասնակիցների բազմաթվության բոլոր ձևերին ընդհանրական է այն, որ երկու կամ ավելի անձինք գործում են համատեղ և վնաս են պատճառում քրեական օրենքով պաշտպանվող շահերին: Ուստի առաջարկվում է քր.օր.-ի գլուխ 7-ի վերնագիրը՝ «Հանցակցությունը», փոխել «Հանցագործության մասնակիցների բազմաթվությունը» վերնագրով, և այդ գլխում առանձին նորմեր նախատեսել հանցագործության մասնակիցների բազմաթվության վերոնշյալ ձևերի վերաբերյալ:

3. Հանցագործության հատուկ սուբյեկտի կողմից հատուկ սուբյեկտի հատկանիշներով չօժտված, բայց քրեական պատասխանատվության ենթակա անձի ներգրավումը հատուկ սուբյեկտով հանցանքի կատարմանը պետք չէ համարել հանցագործության միջնորդավորված կատարում: Հանցագործության միջնորդավորված կատարման էությունը մարդու որոշակի խոցելի վիճակից օգտվելն ու նրան «կենդանի գործիք» դարձնելն է: Սակայն հատուկ սուբյեկտի կողմից ներգրավվող անձն ամբողջությամբ գիտակցում է իր արարքի հանրային վտանգավորությունը և գործում է ազատ կամքով, հետևաբար ճիշտ չի լինի պնդել, որ նա օգտագործվել է որպես «կենդանի գործիք»: Թեև քննարկվող իրավիճակում մի անձի դիտավորությունն իրականացվում է մեկ այլ անձի կողմից, սակայն դա չի կարող դիտվել որպես հանցանքի միջնորդավորված կատարման էական հատկանիշ: Հակառակ պարագայում հանցանքի միջնորդավորված կատարում պետք է համարել նաև հանցանքի դրդչությունը, քանի որ այդ դեպքում նույնպես մի անձի դիտավորությունն իրականացվում է այլ անձի կողմից: Բացի այդ, քննարկվող իրավիճակը հնարավոր է միայն հանցակցության շրջանակներում, իսկ հանցագործության միջնորդավորված կատարումը հնարավոր է նաև առանց հանցակցության: Դա նշանակում է, որ հատուկ սուբյեկտի կողմից հատուկ սուբյեկտի հատկանիշներով չօժտված, բայց քրեական պատասխանատվության ենթակա անձի ներգրավումը հատուկ սուբյեկտով հանցանքի կատարմանը չի ընդգրկվում հանցագործության միջնորդավորված կատարման՝ որպես ինքնուրույն քրեաիրավական ինստիտուտի ընդհանուր մոդելի մեջ: Կարծում ենք, որ տվյալ դեպքում պարզապես առկա է հանցակցության յուրահատուկ դրսևորում:

4. Առաջարկվում է քր.օր.-ի հոդված 38-ի երկրորդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Կատարող է համարվում այն անձը, ով կատարել է սույն օրենսգրքի հատուկ մասով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը հանդիսացող արարքը կամ այդ արարքի կատարմանը մասնակցել է այլ անձանց (համակատարողների) հետ համատեղ: Հատուկ սուբյեկտով հանցանքի կատարող է համարվում նաև հատուկ սուբյեկտի հատկանիշներով օժտված այն անձը, ով հանցանքի օբյեկտիվ կողմն իրականացնելու համար ներգրավել է հատուկ սուբյեկտի հատկանիշներ չունեցող, բայց քրեական պատասխանատվության ենթակա անձի»:

5. Հանցագործության միջնորդավորված կատարումն իր հանրային վտանգավորությամբ տարբերվում է հանցանքի անմիջական կատարումից: Հանցագործության միջնորդավորված կատարման դեպքում բացի

տվյալ հանցագործության անմիջական օբյեկտից՝ վնասվում են նաև որպես «կենդանի գործիք» օգտագործվող մարդու շահերը: Հանցագործության միջնորդավորված կատարողը դրսևորում է բարոյապես պարսավելի վարքագիծ, քանի որ իր հանցավոր նպատակն իրագործում է մարդուն «կենդանի գործիք» դարձնելով: Միջնորդավորված կատարողն օգտվում է իր կողմից օգտագործվող անձի որոշակի խոցելի վիճակից և պատասպարվելով նրա արարքի հետևում՝ ձգտում է խուսափել քրեական պատասխանատվությունից: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է քր.օր.-ի հոդված 63-ում որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք նախատեսել հանցանքն այնպիսի անձանց օգտագործելու միջոցով կատարելը, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել են անզուշտությամբ:

6. Եթե հանցանքի անմիջական կատարման դեպքում դիտավորության գիտակցական հատկանիշը սահմանափակվում է սեփական արարքի հանրային վտանգավորության գիտակցմամբ (սյուբյակական հանցակազմերի դեպքում՝ նաև դրա հետևանքները նախատեսելով), ապա հանցանքի միջնորդավորված կատարման դեպքում դիտավորության գիտակցական հատկանիշը ներառում է նաև միջնորդավորված կատարողի կողմից օգտագործվող անձի արարքի վտանգավորության գիտակցումը (սյուբյակական հանցակազմերի դեպքում՝ նաև դրա հետևանքները նախատեսելը), ինչպես նաև այն հանգամանքի գիտակցումը, որ այդ անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ գործում է անզուշտությամբ: Որոշակի առանձնահատկություն ունի միջնորդավորված կատարողի դիտավորության բովանդակությունն այն դեպքերում, երբ նա օգտագործում է անմեղսունակության վիճակում գտնվող անձի: Տվյալ իրավիճակում միջնորդավորված կատարողը ոչ թե գիտակցում, այլ ընդամենը նախատեսում է, որ իր կողմից օգտագործվող անձն արարքը կատարելու պահին գտնվելու է անմեղսունակության վիճակում:

7. Հանցանքի միջնորդավորված կատարումը դրսևորվում է հանցանքն այնպիսի անձանց օգտագործելու միջոցով կատարելով, ովքեր քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու պահին չեն հասել քրեական պատասխանատվության ենթարկելու օրենքով սահմանված տարիքի կամ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս են պատճառել անմեղսունակության վիճակում կամ վնասը պատճառել են ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ կամ հրամանի կամ կարգադրության կատարման արդյունքում կամ առանց մեղքի կամ անզուշտությամբ:

8. Եթե անձը գիտակցում է, որ հանցանքի կատարմանն է ներգրավում սահմանափակ մեղադրանքային վիճակում գտնվող անձի, ապա հանցագործության միջնորդավորված կատարումը բացակայում է: Տվյալ դեպքում առկա է դերերի բաշխմամբ հանցակցություն:

9. Եթե անձը գիտակցում է, որ հանցանքի կատարման համար օգտագործում է այնպիսի անձի, ով թեև հասել է օրենքով նախատեսված որոշակի տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով ընդունակ չի եղել ամբողջ չափով գիտակցելու իր արարքի բնույթն ու նշանակությունը կամ ղեկավարելու դա, ապա առկա է հանցանքի միջնորդավորված կատարում:

10. Անհաղթահարելի ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի գործադրմամբ հանցանքի միջնորդավորված կատարումն առկա է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1) միջնորդավորված կատարողն իր կողմից օգտագործվող անձի նկատմամբ գործադրել է այնպիսի ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանք, որը վերջինիս զրկել է իր գործողությունները (անգործությունը) ղեկավարելու հնարավորությունից,

2) միջնորդավորված կատարողի կողմից օգտագործվող անձը ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ վնաս է պատճառել քրեական օրենքով պաշտպանվող շահերին,

3) միջնորդավորված կատարողի դիտավորությունն ուղղված է եղել քրեական օրենքով պաշտպանվող տվյալ շահերին վնասելուն:

11. Հաղթահարելի ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի գործադրմամբ հանցանքի միջնորդավորված կատարումն առկա է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1) միջնորդավորված կատարողի գործադրած ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ որպես «գործիք» օգտագործվող անձը չի զրկվել իր գործողությունները (անգործությունը) ղեկավարելու հնարավորությունից,

2) սպառնացող վտանգը՝ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ձևով, եղել է առկա և իրական,

3) միջնորդավորված կատարողի կողմից օգտագործվող անձը ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ վնաս է պատճառել քրեական օրենքով պաշտպանվող շահերին,

4) միջնորդավորված կատարողի կողմից օգտագործվող անձը գիտակցել է, որ իր կողմից կատարված հանրորեն վտանգավոր արարքը հանդիսացել է հարկադրանքը կանխելու կամ դադարեցնելու միակ միջոցը,

5) այդ արարքով հասցված վնասն ավելի փոքր է եղել այն վնասի համեմատությամբ, որը կարող էր առաջանալ հարկադրանքից,

6) միջնորդավորված կատարողի դիտավորությունն ուղղված է եղել տվյալ անձին օգտագործելով քրեական օրենքով պաշտպանվող տվյալ շահերին վնասելուն:

12. Հրաման կամ կարգադրություն տալու ծնով հանցանքի միջնորդավորված կատարումն առկա է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1) միջնորդավորված կատարողը հանդիսացել է իր կողմից օգտագործվող անձի վերադասը և նրան սահմանված կարգի պահպանմամբ տվել է իր իրավասության մեջ մտնող հրաման կամ կարգադրություն,

2) միջնորդավորված կատարողի կողմից օգտագործվող անձն ունեցել է այդ հրամանը կամ կարգադրությունը կատարելու օրենքով սահմանված պարտականություն,

3) միջնորդավորված կատարողի կողմից օգտագործվող անձն այդ հրամանը կամ կարգադրությունը կատարելով՝ վնաս է պատճառել քրեական օրենքով պաշտպանվող շահերին,

4) միջնորդավորված կատարողը գիտակցել է հրամանի կամ կարգադրության հանցավոր բնույթը և ցանկացել է դրա իրականացումն իր ենթակայի կողմից,

5) միջնորդավորված կատարողի կողմից օգտագործվող անձը չի գիտակցել և տվյալ իրավիճակում չէր կարող գիտակցել հրամանի կամ կարգադրության ապօրինի լինելը:

13. Առանց մեղքի վնաս պատճառող անձի օգտագործմամբ հանցանքի միջնորդավորված կատարումն առկա է ներքոնշյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1) միջնորդավորված կատարողն իր կողմից օգտագործվող անձին մոլորեցրել է վերջինիս կողմից կատարվող արարքի այս կամ այն փաստական հանգամանքի վերաբերյալ, որի հետևանքով այդ անձը չի գիտակցել և տվյալ իրադրությունում չէր կարող գիտակցել իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը կամ չի նախատեսել հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը և տվյալ իրադրությունում պարտավոր չէր կամ չէր կարող նախատեսել դրանք,

2) միջնորդավորված կատարողի կողմից օգտագործվող անձը վնաս է պատճառել քրեական օրենքով պաշտպանվող շահերին,

3) միջնորդավորված կատարողի դիտավորությունն ուղղված է եղել

տվյալ անձին օգտագործելով քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնասելուն:

14. Անզգուշությամբ վնաս պատճառող անձի օգտագործմամբ հանցանքի միջնորդավորված կատարումն առկա է ներքոնշյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1) միջնորդավորված կատարողն իր կողմից օգտագործվող անձին մոլորեցրել է վերջինիս կողմից կատարվող արարքի այս կամ այն փաստական հանգամանքի վերաբերյալ, որի հետևանքով այդ անձը չի նախատեսել հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել դրանք,

2) միջնորդավորված կատարողի կողմից օգտագործվող անձը վնաս է պատճառել քրեական օրենքով պաշտպանվող շահերին,

3) միջնորդավորված կատարողի դիտավորությունն ուղղված է եղել տվյալ անձին օգտագործելով քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնասելուն:

15. Հանցանքի միջնորդավորված կատարողի կողմից օգտագործված անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության պատճառած վնասի համար: Բացառություն է կազմում հանցանքի միջնորդավորված կատարման այն դրսևորումը, երբ որպես «գործիք» օգտագործված անձը վնասը պատճառել է անզգուշությամբ, և քր.օր.-ի հատուկ մատուց տվյալ արարքն անզգուշությամբ կատարելը նախատեսված է որպես հանցագործություն:

16. Հանցագործության միջնորդավորված կատարողը կարող է թույլ տալ փաստական սխալ և կարծել, թե հանցանքը կատարում է այնպիսի անձի օգտագործելու միջոցով, ով օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության, սակայն իրականում վերջինս ենթակա է քրեական պատասխանատվության: Տվյալ իրավիճակում առաջարկվում է հանցագործության միջնորդավորված կատարողի արարքը որակել որպես հանցափորձ: Նույն կերպ, անձի արարքն առաջարկվում է որակել որպես հանցափորձ նաև հակառակ իրավիճակում, երբ անձը կարծել է, թե հանցագործության է դրդում քրեական պատասխանատվության ենթակա անձի, սակայն իրականում վերջինս օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության: Միևնույն ժամանակ, հանցանքի միջնորդավորված կատարման դեպքում փաստական սխալի քրեաիրավական նշանակությունը պետք է սահմանափակվի բացառապես արարքի որակմանը վերաբերող հարցերի շրջանակով: Ոստի քննարկված իրավիճակներում անձի արարքը որպես հանցափորձ որակելը չպետք է ինքնաբերաբար հանգեցնի պատժի պարտադիր մեղմացման:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1) Գրիգորյան Լ., «Քրեական պատասխանատվությունը հանցագործության միջնորդավորված կատարման համար», Պետություն և իրավունք, Երևան, 2015, № 1 (67), էջեր 48-53:

2) Գրիգորյան Լ., «Հանցագործության կատարողի օրենսդրական բնորոշման կատարելագործման հեռանկարները», Պետություն և իրավունք, Երևան, 2016, № 1 (71), էջեր 87-94:

3) Գրիգորյան Լ., «Հանցագործության միջնորդավորված կատարման հասկացությունը և հարաբերակցությունը հանցագործության մասնակիցների բազմակիության այլ ձևերի հետ», Պետություն և իրավունք, Երևան, 2016, № 4 (74), էջեր 73-81:

4) Գրիգորյան Լ., «Հանցագործության միջնորդավորված կատարման որակման հարցերը փաստական սխալի դեպքում», «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, Երևան, 2018, № 05-06 (227-228), էջեր 34-38:

5) Գրիգորյան Լ., «Քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի չհասած կամ անմեղսունակության վիճակում գտնվող անձին օգտագործելու միջոցով հանցանք կատարելու հարցի շուրջ», Պետություն և իրավունք, Երևան, 2018, № 2 (80), էջեր 93-100:

6) Գրիգորյան Լ., «Հանցագործության միջնորդավորված կատարում. արդի վիճակը և օրենսդրական կարգավորման հեռանկարները», «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիր, Երևան, 2019, № 7, էջեր 9-17:

Григорян Лала Аршавировна

**ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ УГОЛОВНОЙ
ОТВЕТСТВЕННОСТИ ЗА ПОСРЕДСТВЕННОЕ ИСПОЛНЕНИЕ
ПРЕСТУПЛЕНИЯ**

РЕЗЮМЕ

В юридической литературе посредственное исполнение преступления традиционно рассматривается в рамках института соучастия. Однако такое узкое толкование указанной проблемы не позволяет выявить реальное место и значение посредственного исполнения преступления в системе уголовно-правовых институтов. Вопросы посредственного исполнения преступления касаются не только института соучастия, но и других сфер уголовного права, таких как объективная сторона, субъект и субъективная сторона преступления, обстоятельства, исключающие преступность деяния и др. По этой причине в Уголовном кодексе РА нормы о посредственном исполнении преступления не систематизированы, они выступают как элементы различных институтов общей части Уголовного кодекса РА. Это означает, что эти нормы могут быть применены только в комплексе, и поэтому вопросы посредственного исполнения преступления также не могут быть исследованы изолированно.

Действующее законодательное регулирование посредственного исполнения преступления не дает возможность решить некоторые спорные вопросы, касающиеся данной проблемы. В частности, законодательно не урегулирована возможность посредственного исполнения преступления вне рамок соучастия, кроме этого могут возникнуть трудности квалификации посредственного исполнения преступления при фактической ошибке, эксцессе посредственного исполнителя, а также при неоконченном посредственном исполнении преступления. Вопросы квалификации деяний посредственного подстрекателя, организатора и пособника, а также

некоторые другие вопросы, связанные с посредственным исполнением преступления нуждаются в более детальном изучении.

В рамках диссертации автором было изучено историческое развитие законодательного определения исполнителя преступления, был проведен анализ признаков посредственного исполнения преступления, сформулировано определение посредственного исполнения преступления, выяснено соотношение посредственного исполнения преступления с другими видами множественности участников преступления, проведено сравнительно-правовое исследование норм о посредственном исполнении преступления по уголовному законодательству Армении и зарубежных стран, выявлены особенности отдельных проявлений посредственного исполнения преступления, разработаны правила квалификации посредственного исполнения преступления, а также были представлены законодательные предложения на основе проведенного исследования.

Научная новизна диссертации состоит в том, что в армянской юриспруденции она является первым детальным и всеобъемлющим исследованием научно-практических проблем уголовной ответственности за посредственное исполнение преступления. Научная новизна диссертации в первую очередь отражена в представленных на защиту положениях, а также в представленных в заключении выводах и предложениях.

Диссертация имеет не только теоретическое, но и практическое значение, так как представленные выводы и предложения могут быть использованы не только в научных исследованиях, но и в законотворческой деятельности, в правоприменительной практике и в учебном процессе.

Диссертация обсуждена на кафедре уголовного права ЕГУ. Основные положения диссертации отражены в опубликованных научных статьях автора.

Lala Arshavir Grigoryan

**THEORETICAL AND PRACTICAL ISSUES OF CRIMINAL LIABILITY FOR
THE MEDIATED COMMISSION OF A CRIME**

RESUME

In the professional literature the mediated commission of a crime has been traditionally discussed within the framework of the institute of complicity. Such a limitation of the scope of the issue study does not allow to reveal the true place and significance of the mediated commission of a crime in the system of criminal-legal institutions. The issues related to the mediated commission of a crime concern not only the complicity but also other areas of the Criminal Law, such as the objective side of the crime, subject and subjective side of the crime, the circumstances excluding the crime. For this reason, the norms of the Criminal Code of the Republic of Armenia on the mediated commission of a crime have not been coordinated and acted as constituent elements of the various institutions of the general part of the Criminal Code. This means that these norms cannot be applied in any other way than in a complex way, so the issues related to the mediated commission of a crime cannot be studied in isolation either.

Existing legislative regulation on the mediated commission of a crime does not resolve all the disputed issues related to the given issue. In particular, the possibility of the mediated commission of a separate crime from the institution of complicity is not stipulated legislatively. During the qualification of a crime in case of the mediated committal difficulties may arise related to the factual error, exaggeration, unfinished mediated commission of a crime. Issues related to mediated incitement, assistance and organization, as well as other issues related to the mediated commission of a crime should be also discussed.

Within the framework of the dissertation, the author has studied the historical development of the criminal characterization of the crime performer, defined the concept of the mediated commission of a crime, analyzed its

features, clarified other forms of correlation between the mediated commission of a crime and great number of accomplices, conducted the comparative analysis on the norms of the criminal legislation of the Republic of Armenia and foreign countries on the mediated commission of a crime, identified the peculiarities of individual manifestations of the mediated commission of a crime, elaborated the qualification rules of the mediated commission of a crime, and presented a number of legislative suggestions based on the results of the research.

The scientific novelty of the dissertation is that for the first time in the native Criminal Law an attempt has been made to carry out a comprehensive and full analysis of the theoretical and practical problems of the mediated commission of a crime. The theoretical conclusions have been made from the results of the research and legislative suggestions have been presented. The scientific novelty of the dissertation is also reflected in the provisions presented for the defense, as well as in the conclusions and suggestions presented in the conclusion of the dissertation in a comprehensive form.

The research has both theoretical and practical importance, as its results can be used not only in the future scientific researches, but also in the law-making activities and law enforcement practice directed at the improvement of criminal legislation, as well as in the educational process.

The main provisions and conclusions of the dissertation have been discussed at the Chair of Criminal Law of the Yerevan State University, as well as they have found their place in the scientific articles published by the author on the topic of dissertation and reflecting its content.